

**ԱՐԵՎԵԼՔԻ ԹԱՔԱՎՈՐԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ըլում ա, չի ըլում՝ ծամանակով մի թաքավոր, ունենում ա մի տղա, էդ տղեն ջահել վախտը քշերը քնած էրագի միջին տենում ա երկնքիցը մի թուր քաշ արած: Թաքավորի տղեն իրեն վրեն ա՝ անում ու շատ ուրախանում: Եղնա զարթնում ա, տենում ա, որ էրագ ա, շատ մտքի եղնա ա ընկնում: Շատ դարդ անելուցը օրը-օրին հալվում մաշվում ա:

Թաքավորը տղի հալումաշ ըլիլը տենում ա, ըծու հարցնում ա տղին թե.— Խի՞ ես հալումաշ ըլում:

Տղեն ուզում չի հորը ջուղաք տա, վերջը շատ դանչանք, միննաթ անելուց եղը, հորն ասում ա.— Էրագումս մի թուր եմ տեհել երկնքիցը կախ էլած, թե էն թուրը ինձ հմար գտար ու բերիլ տվիր՝ ես կապրեմ, թե չէ խու կմեռնեմ:

Թաքավորը էն սահաթին իրա թաքավորության միջին հրամայում ա բոլոր թուր շինողներին, որ ամեն մինը մի թուր շինի, բերի, որի շինած թուրը որ թաքավորի տղեն հավանեց՝ «Նրան իրա քաշովը մին ոսկի կտամ»:

Ըծու թուր շինող ուստենին սարքում են ամենքը մի թուր ու բերում են թաքավորի տղի կուշտը: Թաքավորի տղեն էլ շատ դարդ անելուցը էն օրն ա ընկնում, որ քնթնիցը բռնեիր՝ ֆոքին կտեր: Թուր շինողին մի-մին բերում են իրանց շինած թուրը թաքավորի տղին շանց տալի: Նա մինն էլ ա հավանում չի:

Ասըմ ա.— Ման էկեք քունջ ու պուճախում բալքա թուր շինող ըլի մնացած:

Յասաուլին ման գալեն, ման գալեն իմանում են, որ մի պառավ ուստա մնացել ա, թուր չի շինել: Վեր են ունում բերում թաքավորի կուշտը:

Թաքավորը նրան ասըմ ա.— Ուստա՛, իմ տղեն էրագումը մի թուր ա տեհել, թե կարենաս էնթավր թուր շինես, քեզ քու քաշովը մին ոսկի կտամ:

Պառավ ուստեն էլ ասըմ ա.— Շատ լավ կըլի, թաքավորն ապրած կենա, ես քու տղի ուզած թուրը կշինեմ, իրեք օր միուլ տուր, իրեք օրեն եղնա կբերեմ:

Թուր շինող ուստեն գալիս ա տուն, կնգանն ասըմ ա.— Ա՛յ կնիկ, թաքավորի տղեն էրագումը մի թուր ա տեհել, ու մի ուստա էլ ա կարացել չի շինել: Թաքավորը ինձ կանչեց ասավ. «Թե կարենաս շինես իմ տղի ուզած թուրը, քեզ՝ քու քաշովը մին ոսկի կտամ», հըմի գնալ պտիմ մերին՝ անձող անելու. էրկու հաց կապի աղլուխումը, կացինն ու դազմեն էլ դուս բի, որ գնամ: Կնիկն ասըմ ա.— Ա՛յ մարդ, քու տունը չքանդվի, դու ո՞ր թուր շինողն ես, որ բոյինդ ես կալել թաքավորի տղի թուրը շինելու, դու ավլած կալումը կարում չես ման գաս, էքուց էլօր էլ, որ թաքավորը գլուխդ տա, լավ կըլի՝:

Մարդն ասըմ ա.— Գլխահան մի անիլ, էդ քու բանը չի. կըշինեմ, թե չեմ շինիչ, էդ ես գիտեմ, քունն էն ա կացինն ու դազմեն բերես:

Կնիկը գնում ա հացը աղլուխումը կապում, կացինն ու դազմեն բերում տալի մարդին: Թուր շինող ուստեն վեր ա ունում, հացը կապում մեջքին, հաջաթնին դնում ուսին, ասաու անումը տալիս, ըծու ճամփա ընկնում դըբա մերին: Գնում ա մերին, ըսկսում ա փետ կոտրատել, որ անձող անի:

Պառավ մարդ, մի էրկու խտիտ փետ ջարդելուց եղնա բեզարում ա, ասում ա. «Համ մի չիբուխ քաշեմ, համ էլ դինջանամ»:

Թիկն ա տալի, նըղըղում ա, քունը տանում է, ու քնում ա:

Էրագի միջին մի սիպտրկամիրութ մարդ դրան էրնութք ա ըլում. ասըմ ա.— Բարի՛ աջողում, ա՛յ տղա, ո՛ւր ես էկել ըստեղ:

Նա էլ ասըմ ա.— Ես թուր շինող ուստա եմ, էկել եմ անձող անեմ, որ տանեմ, թաքավորի տղեն էրագումը մի թուր ա տեհել, ընթավուր մի թուր շինեմ:

Եղնա էն սիպտրկամիրութ մարդը ասըմ ա.— Ա՛ հալիվոր, դու էն թուրը կարալ չես շինի. ես էն թրի տեղը քեզ շանց կտամ, կերթաս վեր կանես, կտանես թաքավորի տղին կտաս, կաեսս որ. «Թուրը ես եմ շինել»:

Նա էլ ասըմ ա.— Գըխիդ մատաղ, որտե՞ղ ա էն թուրը, որ ինձ շանց պտիս տա:

Ասըմ ա.— Հըեհա՛, էն դաշի գլխի մենձ ծառը տենում է՞ս:

Ասըմ ա.— Տենում եմ:

Ասըմ ա.— Անխոս կերթաս էն ծառին իրեք հետ կտաս: Ընտեղ մի դուռը բաց կըլի, երգնքի խագին են ընդեղ ա, անգին քարով լիքը, թուրն էլ կախ արած, մի դադի էլ ա ձեռ չես տալ. թուրը վերկունես, դուս կգաս, կսկսես փախչիլը. եղնեղ ծառերը, քարերը լիզու կըլեն կասեն. «Տարավ հա՛, տարա՛վ, տարավ հա՛ տարա՛վ»: Համա դու եղ չմտիկ անես՝ քար կդառնաս, չկել մի էս ջուրը անց կենաս: Ջուրը անց կացար թե չէ, սարերն էլ սուս կանեն, ծառերն էլ, քարերն էլ: Եղնա վերկունես, կտանես կտաս թաքավորի տղին:

Էդ խոսքումը թուր շինողը օյանմիշ ա ըլում, տենում ա՝ էրագումն ա: Համա ճշկրիտ, էն մարդի շանց տված ծառը ախար-բախար աղաքին էրնում ա: Միտքն ա անում, միտքը ու ասում. — Տե՛ր աստված, էս ի՞նչ տեսիլք տեհա, հլա մի գնամ՝ խո ոտիս ցա՛վ չի տալ, էն մարդի ասածի պես իրեք հետ ծառին տամ, հմի յաբախտ, ի՞նչ կլի, կլի:

Ասըմ ա ու գնում, հասնում ծառին, իրեք հետ ծառին կացնով տալի, մին էլ էն ա տենում, որ շրըխկալե ծառիցը մի դուռը բաց էլավ, կանաչ ու կարմիր լիսը ընկավ էդ մերին, ըսկսեց կրակի պես էրվիլը:

Էդ մարդն ասավ.— Քեզ շատ փառք ըլի, աստվա՛ծ:

Ու տուն մտավ, թուրը կախ արած տեղիցը վեկալավ, պո՛ւկ, դա փախավ, որ էն ջուրը անց կենա, նրա եղնուց ծառերը, քարերը, սարերը հարափրզան արին. «Տարա՛վ, հա՛յ, տարավ»:

Նա եղ չմտիկ արավ, չքել ջրի անց կենալը: Ջուրն անցկացավ թե չէ, չիմն էլ անսասացան:

Թուրը վի կալավ, անձողի տոպրակումը փթաթեց, ճամփա ընկավ դրա տուն. իրիկունը քնելահանգամին հասավ տուն, տեհավ կնիկը քնել ա, դուռը եղնա փակ տվել, դի ա տալի.—

Ա՛յ կնիկ, վիկաց, դուռը բաց արա:

Կնիկը վեր ա կենում, դուռը բաց ա անում, մարդը նի ա մտնում գլխի անցածը մին-մին պատմում, թուրը տոպրակիցը հանում, շանց տալի, տունը կրակի պես լուսավորում ա: Էդ քշեր գեջդանգնջ ոնց որ ըլում ա՝ լիսացնում ա, ռավոտը վաղ վեր ա կենում, շորերը հաքնում, գնում թաքահորի ամարաթը:

Ասըմ ա.— Թաքավո՛րն ապրած կենա, թուրը շինել եմ, վախում եմ ձեռիցս խլեն, բերելիս մի քանի յասաուլ տու, որ հետս գան, թուրը բերենք:

Թաքավորը էն հադաղը յասաուլին տալիս ա, ասում ա.— Չուստ բերեք:

Յասաուլին թուր շինողի հետ գնում են տուն, թուր շինող ուստեն մի ժանգոտ սինու միջին դնում ա թուրը, դնում գլխին, յասաուլին էլ, որը աղաքի կոնուց, որը եղի կոնուց թրերը հանած, գնում են թաքավորի ամարաթը: Թաքավորը տենալու պես շատ ուրախանում ա, որ աղաքի անգամն ա, որ ըթավուր թուր ա տենում: Տանում են, դնում թաքավորի տղի դռնին. էն սհաթը օյանմիշ ա ըլում թաքավորի տղեն, ու ասըմ.— Սա էն թուրն ա, որ էրագումս տեհել եմ ու վրես կապել:

Թաքավորը իրա խոսքին հաստատ, ասում ա խազինապետին.— Ղանթարը, էս մարդին դրեք ղանթարի մի թայումը, ոսկին էլ անեցեք մի թայը, իրան քաշովը մին ոսկի տվեք, տանի: Տարան էդ ուստին իրան քաշովը մին ոսկի տվին. վեկալավ, գնաց:

Հըմի խաբարը ումի ց տանք թաքավորի տղից:

Թաքավորի տղեն իրեն տեհած թուրը գտնելուց եղնա օրնօրին լավանում ա, դառնում մի ածղահա տղամարդ: Օրերի մի օրը թաքավորը գալիս ա տղին ասում.— Ա՛յ որդի, էդ ա քու ուզածը մի թուր էր, էդ էլ գտանք, հըմի էլ ի՞նչ դարդ ունես. արի քեզ հմա մի ախչիկ ուզեմ, էս էլ էս ա ծերացել եմ, ինձանից եղնա դու պետք ա իմ թաքավորությունը տիրապետես:

Տղեն ասում ա.— Չէ՛, ա՛յ հեր, էս դեռ մուրազ ունեմ:

Հերն ասում ա.— Ի՞նչ մուրազ ունես, ա՛յ որդի:

Տղեն ասում ա.— Ես մի ընթավուր ձի եմ ուզում, որ վեր ըլեմ ու ծովի մեջն անեմ, ծովի տակիցը ոտի նալի հետ թոզ հանի:

Հերն ասում ա.— Ա՛յ որդի, հրես մեր իլխին ծովի դրաղին, հազարավոր ձիան ու մադիաննի ունենք, գնա՛, որը որ հավանում էս, վե կալ ու բի:

Թաքավորի տղեն էլ գնում ա ծովի դրաղը, իրանց իլխի կուշտը: Իլխըչին տենում ա, որ թաքավորի տղին էկել ա, մադիանների միջին ման ա գալի, ձեռը դնում ա է՛ս մադիանի մեջքին, է՛ն մադիանի մեջքին: Իլխըչին աղաք ա գալի, գլուխ վեր բերում թաքավորի տղին, ըժու ասում.— Թաքավորի տղեն ապրած կենա, էդ ի՞նչ էս ուզում մադիաններուցը, հըվանում չէ՞ս մադիաններուն:

Թաքավորի տղեն էլ ասում ա.— Ես իմ վերընելու հըմա մի ձի եմ ուզում, որ էս ծովի մեջն անեմ, ծովը ջրդի անցկենա, ոտի հետ ծովի տակիցը թոզ հանի:

Իլխըչին ասում ա.— Է՛, թաքավորի տղա, էդ քու ուզած ձին միայն էն բրդոտ քուռակը կդառնա, նա ծովի էյրից ա. ինձ քառասուն օր միուլ տուր, և ինչ ուզեմ քուռակի հմա՝ ուտելիք դրկի, քառասուն օրից եղնը, թե քու ուզածի պես էս ծովը ջրդի ոչ ու անց կենա, էն վախտը իմ արինը քի հալալ, գլուխս տու:

Թաքավորի տղեն շնորհակալ կացավ իլխըչուցը ու ասավ.— Աչքիս վրա, ինչ ուտելիք որ ուզես քուռակի հըմար, էն սհաթը կդարգեմ:

Իլխըչին էլ ասավ.— Օրենը երկու փութ քիշմիշ ու գարի պտի զարկես:

Թաքավորի տղեն ասավ.— Ռազի եմ, քու մշտըլուղը լիովին կտամ:

Իլխըչին ուրախացավ աշխարովը մին, քուռակը տարավ կապեց մի գոմում, ինչ ծակ ու ծուկ կար՝ բիրադի կալավ, որ նա մի պուճուր լիս էլ ա տենի ոչ, տանը ջուր տվուց, քառասուն օր լիս աշխարիը շհանց չի տվուց: Վերջը, քառասուն օրը թմամվելուց եղնա խաբար ա դրկում թաքավորի տղին, թե.— Արի՛, ձիդ վեր ի՛լ ու գնա:

Թաքավորի տղեն գալիս ա իլխըչու կուշտը. իլխըչին գոմիցը դուս ա քաշում ձին, ձին լիս աշխարիը տենում ա թե չէ՝ ուշքը գծում ա սարերի գլուխը, ուզում ա թոչի էս սարի գլխիցը՝ էն սարի գլուխը:

Թաքավորի տղեն ձին վեր ա ըլում, ասում ա.— Դե՛, Սևուկ ձի ջան, մի հունարդ շանց տուր, քեզ էս ծովն եմ գծում, էս ծովը մկրատի պես կտիի անցկա՛ց:

Ասավ ու թաքավորի տղեն դամշով տվուց ձիուն: Ձին թռավ ընկավ ծովը, ջարդեց, անցկացավ: Ըլեթ էն կոնուցը ջարդեց, էս կուռն անցկացավ: Թաքավորի տղեն շատ մենձ ռազի ա կենում իլխըչուցը, իրան խոստացած մըշտըլուղը մինը հնգով տալիս ա ու գալի իրանց ամարաթը: Թաքավորը տենում ա, որ իրան տղեն իրան սրտի ուզած ձին էլ ա ճարել, ասում ա.— Ա՛յ որդի, էդ ա թուրն ուզեիր՝ ճարեցինք, ձին ուզեիր՝ ճարեցինք, հըմի էլ ի՞նչ կասես, արի՛, քեզ փսակենք, էս ծերացել եմ:

Տղեն ասում ա.— Չէ՛, ա՛յ հեր, դեռ ես մուրագ ունեմ։ Հըմի էլ պտի գնամ, աշխար ման գամ, տենամ աշխարքումը ինչ կա,

ինչ չկա։

Հերն ասում ա.— Ա՛յ որդի, գնա մեր խագնուցը ինչքան քեզ հարկավոր ա ոսկի, էրծաթ՝ վեկալ, քեզ հմա երաղ-ասպապ հարկավոր ա՝ վեկալ, ձիդ էլ ռախտի, տերը քեզ հետ, աստված բանիդ հաջողորթին տա՛, գնա՛ երկիր տես։

Տղեն վեր ա ունում ձին ռախտում, իրան հըմա շատ ոսկի վեր ունում, խուրջինը լըքցընում, իրան երաղ-ասպարը կապում, աստծու անումը տալի ու ճամփա ընկնում։ Թե ուր ա գնում՝ ինքն էլ չգիտի։

Շատ ա գնում, թե քիչ ա գնում, ճամփումը իրան պես մի հաքած-կապած, երաղ-ասպապումը կորած մի լիստիկ՝ տղա ռաստ ա գալի ու ասում.— Բարի հաջողում քի՛, ախպե՛ր։ Ի՞նչ մարդ ես, ո՞ր էս գնում։

Թաքավորի տղեն ասում ա.— Ես Արևելքի թաքավորի տղեն եմ, գնում եմ աշխար ման գալու, բա դու ի՞նչ մարդ ես, ո՞ր էս գնում։

— Ես էլ,— ասում ա,— Արևմուտքի թաքավորի տղեն եմ, գնում եմ քեզ նման աշխար ման գալու։

Թաքավորի տղեն ասում ա.— Էդ շա՛տ լավ ա, դու իսկական իմ ախպերն ես, արի ախպերանանք, մին չըլենք, էրկու ըլենք, գնանք։

Դրանք ախպերանում են, իրուր հետ վիկենում գնում։ Շատ են գնում, քիչ, աստված գիտի, էլի իրանց պես մի ռաշիդ տղա ա ռաստ գալի, ասում ա.— Բարի աջողում ձե՛զ, ախպերտինք ջա՛ն։ Սրանք էլ ասում են.— Աստու բարին քե՛զ, ախպեր ջա՛ն։

— Տղե՛րք, ասելն ամոթ չըլի, ի՞նչ մարդիկ եք, ո՞ր եք գնում։

Նրանք ջուղաբ են տալի, թե. «Մենք՝ մինս Արևելքի թաքավորի տղեն ենք, մինս՝ Արևմուտքի, գնում ենք աշխար ման գալու։ Բա դու ի՞նչ մարդ ես, ի՞նչ ես ման գալի, ո՞ր ես գնում»։

Նա էլ ասում ա.— Ես Հարավի թաքավորի տղեն եմ, գնում եմ ձեզ պես աշխարհ տենալու։

— Էդ լա՛վ ա, ախպեր ջա՛ն, արի ախպերանանք, էրկու չըլենք, իրեք ըլենք, գնա՛նք։ Սրանք ախպերացան, ճամփա ընկան գնացին, շատ գնացին, թե քիչ, էդ էլ աստված գիտի, ճամփումը իրանց նման մի ռաշիդ տղի ռաստ էկան։

Էդ տղեն ասավ.— Բարի աջողում ձե՛զ, ախպերտինք ջա՛ն։

Նրանք ասին.— Աստու բարին քե՛զ, ախպեր ջա՛ն։

Էդ տղեն ասավ.— Ասիլն ամոթ չըլի, ի՞նչ մարդիկ եք, ո՞ր եք գնում։

Նրանք ասին.— Մենք՝ մինս Արևելքի թաքավորի տղեն ենք, մինս՝ Արևմուտքի, մինս էլ՝ Հարավի։ Գնում ենք աշխարհ տենալու։ Բա դու ի՞նչ մարդ ես, ո՞ր ես գնում։

Նա էլ ասում ա, թե.— Ես Հյուսիսի թաքավորի տղեն եմ, գնում եմ ձեզ պես աշխարհ ման գալու։

Սրանք ասին.— Օ՛, էդ լա՛վ ա, արի մեզ հետ ախպերանանք, իրեք չըլենք, չորս ըլենք։

Դրանք ախպերացան, չորս հոգով ըդու էլան գնացին։ Շատ գնացին, թե քիչ գնացին, դրանց աղաքը մի շհար էկավ։

Էն Արևելքի թաքավորի տղեն ասավ.— Ախպերտի՛նք, մենք չորսըս էլ թաքավորի տղեք ենք, չիմս էլ շատ ոսկի, էրծաթ ունենք, թե գնանք էս շահարումը մի հարուստ մարդի տան դոնաղ ընկընենք՝ ի՞նչ նշան ունի, դեհ էն ա, հարուստ ա ու հարուստ։ Ամեքիցը լավն էն ա, մենք գնանք էս շհարումը մի քյասիբ, անճար մարդի տան դոնաղ ընկնենք, ամենքս որ մի բուռը

ոսկի տանք՝ էն մարդը համ մեզ կօխնի, մեր բանին հաջողութիւն կըլի, ինքն էլ կհարստանա. իմ խոսքին ի՞նչ էք ասում:

Նրանք ասին.— Ախպեր ջա՛ն, դուն մեր մենձ ախպերն ես, դու ոնց որ մեզ բնագլխու դնես, ընենց էլ կանենք:

Ասին ու հասան շհարի դրադը, տեհան մի պառավ կնիկ փեշը վեքաշած, չոփից, խուշուրից, բանից թոփ ա անում:

Արին.— Բարի օր քի՛, դեղի՛:

Ասավ.— Աստու բարին, բալա ջա՛ն:

Ասին.— Դեղի ջա՛ն, մեզ դոնադ չես վեր ունի՞լ:

Նա էլ ասում ա.— Ա՛յ բալեք ջան, դոնախը աստունն ա, խի՞ չեմ վերունիլ, համա ձեր լայեղական տեղ չունեն: Մի քյասիբ պառավ եմ, տղես մեռավ, հարսըս էլ մարդի գնաց, նրանից էրկու եթիմ մնաց, հըմի ման եմ գալի մի տեղից հաց ճարում, մի տեղից փետ ճարում, բերում խեղճ ըրեխիս եթիմներն պահում: Էկեք տուն, տեհեք, թե ձեր կենալու լայեղ ա, կացե՛ք: Դրանք աեին.— Դեղի ջա՛ն, դու դարդ մի անիլ, ա՛ն քեզ մի բուռը ոսկի, գնա մեզ հմա տեղաշոր էլ քրեհի բի, հացի թաղարեքն էլ տես:

Ասին ու վերէկան ձիաննուցը, ձիանը տարան գոմումը կապեցին, իրանք էլ էկան պառավի տանը խտոր ընկան, եղնա իրիկնահացը կերան, իրեք ընկերը ճամփումը շատ բեզարել ին, նըղըղեցին, քնեցին:

Համա Արևելքի թաքավորի տղեն չկել իրան թուրը իրան վրիցը վեր չուներ, դրադ դներ, քունը տանիլ չեր, թեկուզ մի ամիս էլ հընե կացել էր: Զարթնելու վախտն էլ, չկել թուրը դոշին չին դրել, զարթնիլ չեր: Պառավն ու թաքավորի տղեն իրուր հետ գրից անեին:

Թաքավորի տղեն հարցնում ա, թե.— Դեղի՛, էս ձեր շհարումը ի՞նչ թագա խաբար կա:

Պառավն ասըմ ա.— Ա՛յ բալա ջան, մեր քաղաքին, աստու գուլումը հասել ա, մի ուշապ օձ ա փեյդահ էլել էս քաղքի աղբրի ակնումը, չկել օրը մի ախչիկ չենք տալի էն ուշապին, որ ուտի՝ նա մեզ ջուր չի տալի: Ախչիկը տալիս ենք, ախչկանովն ա ըլում, չքել ախչկանը ուտիլը, մենք ինչ դդա բշարում ենք, ջուր ենք վեր ունում: Ախչկանը ուտում ա պրծնում թե չէ, ջուրը եդ ա կապում:

Քաղաքի ամեն տանից էլ ախչիկ տվել են, էգուց էլ թաքավորի ախչկա հերթն ա, նրա ախչիկը պետք ա գնա:

Թաքավորի տղեն ասըմ ա.— Դեղի ջան, բա էն Ուշապի տեղը ինձ շանց չես տա՞լ:

Պառավն ասըմ ա.— Ա՛յ բալա ջան, խի՞ չեմ շանց տալ, համա ջահել ես, ջիվան ես, քեզ պես իգիթնի շատ են գնացել, նրա հետ կոփվ արել, անիծածը չմնին էլ կուլ ա տվել: Արի՛, ինձ լսի՛ ձեռը քաշի:

— Չէ՛, — ասըմ ա, — դեղի ջա՛ն, քու ընչի՞ն ա պետքը, քոնն էն ա Ուշապի տեղը ինձ շանց տաս:

— Դե որ ասըմ ես, բալա ջա՛ն, շանց կտամ:

Դուս ա գալի դիմաց-դիմաց, սարի տակին շանց ա տալի, որ. «Էն սարի տակին ա»:

Եդ են գալի, տանը նստում չքելի ծեգը գձիլը:

Էդ տղեն վեր ա կենում պառավին ասըմ.— Դեղի՛, ախպերտինքս որ հարցնեն, թե. «Ո՞ր ա», ասա՛ դուս էլավ, հրես կգա: Ասես ոչ թե՝ գնաց Ուշաքի հետ կովելու, թե չէ գլուխդ կտամ:

Ասում ա ու ըդու ըլում դըբա Ուշաքը: Ընդեղ ա հասնում, որ թաքավորի ախչկան տարել են ընտեղ կաղնացրել, Ուշաքն էլ քնած ա, զարթնիլ պտի ու կուլ տա:

Թաքավորի տղեն աղաք ա գնում, տենում ա, որ թաքավորի ախչկա պռոշը ճաթել ա վախելուցը, ասըմ ա.— Թաքավորի ախչի՛կ, որ ասես, վախես ոչ, էս էկել եմ Ուշաքի օրը սև անեմ: Կամ ինձ պետք ա փչացնեմ, կամ Ուշաքին: Ըսօր դու Ուշաքի ձեռիցը ազատվիլ պտիս:

Ասըմ ա ու աղաք գնում, Ուշաբի գլխի վերի կռանը կաղնում: Թուրը դուս ա քաշում ու Ուշաբին ասըմ.— Ուշա՛բ, Ուշա՛բ, ի՞նչ ես քնել, ես նամարդ չեմ, էկել եմ մարդի-մարդանա, տղամարդի պես հետդ կովեմ: Մի հետ դուն տուր, մի հետ ես տամ, որս կհաղթենք, կհաղթենք: Ուշաբն ասըմ ա.— Էս քաղքցիք էս ի՞նչ լավ խալիս են, չկել

հմի օրենը մինը դրկեին պաշար, ըսօր էրկուսն են դրկել,— ասավ ու ուզաց թաքավորի տղին կուլ տա:

Թաքավորի տղեն Ուշաբի վրա ծիծաղեց.— Է՛, Ուշա՛բ, ընչե՞ր ես ասում, ըսօր ես քու գլուխդ պետք ա ջարդեմ, քեզ ասում եմ մի հետ դու տաս, մի հետ՝ ես:

Ասավ ու թուրը հանեց, տուր թե կտաս Ուշաբի շլնքակոթին: Ուշապը էրկու կտոր էլավ, ջրի էրեսը կարմրեց Ուշապի արնովը: Թաքավորի ախչիկը, որ էդ բանը տեհավ, վազ տվուց, ձեռը տարավ արնումը թաթախ արավ, բերուց ու էդ տղի թիկունքումը ձեռը դաջեց, ասավ.— Գնա՛, ես քեզ կգտնեմ:

Թաքավորի տղեն ձին վեր էլավ, փախավ, ախչիկն էլ գնաց հոր ամարաթը: Խաբարն ընկավ սաղ շահարը, որ Ուշաբին սպանել են. ով իմացավ՝ դրա ախբրի ակը վազ տվեցին, գնացին, տեհան՝ Ուշաբը կիսումը կես արած: Շահարի իգիթները, ամենքը մի թուր վրեններուն կապած, վազ տվին գնացին թաքավորի ամարաթի աղաքը կաղնեցին, որ թաքավորին ասեն, թե. «Մենք ենք սպանել», որ իրենք դառնան թաքավորի փեսեն:

Էդ խաբարը իմացավ թաքավորը թե չէ, շատ ուրախացավ, հրամայեց քաղաքի ճամփենին կապեն, քաղաքիցը դուս ըլող չըլի, բոլոր էլլիզը թոփ ըլին թաքավորի ամարաթի աղաք, որ տենան ով ա սպանել Ուշաբին:

Էկան բոլոր էլլիզը, կաղնեցին թաքավորի ամարաթի աղաքին, թաքավորի ախչիկը ջերգա-ջերգա կաղնեցնուլ տվուց խալիսին, որ ինքը պետք ա միջովը ման գա, իրա ջանը Ուշաբի ձեռիցը ազատողին գտնի: Թաքավորի ախչիկը ման ա գալի արանքներումը, չիմնուն էլ էդ տալի: Վերջը թաքավորը հրաման ա անըմ, որ.— Երկնքումն էլ ըլի, պետք ա գտնուք, գետնի տակըն էլ ըլի, պետք ա հանեք:

Խաբարը հասցրին թաքավորին, թե փլան պառավի տանը չորս դարիք տղա կա: Էն սհաթը թաքավորը հրաման ա անըմ, թե.— Գնացե՛ք, բերեք:

Յասաուլնին գնում են էդ պառավի տան տղերանցը բերում: Դեռ հեռու են ըլում, թաքավորի ախչիկը ճնանչում ա, որ էն տղեն ա սպանել Ուշաբին:

Ասըմ ա.— Թաքավո՛ր, հրեն Ուշաբի սպանողը գալիս ա:

Էկավ թե չէ, տեհան թիկունքը Ուշաբի արնով դաջած:

Ասավ.— Էս էլ իմ ձեռի նշանը:

Թաքավորը սիրով տուն տարավ դրանց, շատ մենձ դոնախլուդ սարքեց ու քեֆի լավ վախտը իմացավ էդ տղի ով ըլիլը, ասավ.— Իմ ախչիկս տալիս եմ քեզ, դու կըլես ինձանից եղը թաքավոր:

Թաքավորի տղեն ասավ.— Թաքավորն ապրած կենա, մենք չորսս էլ ախպեր ենք, ես չիմնու պուճուրն եմ, ես քու ախչիկը կուզեմ իմ մենձ ախպոր հմա:

Թաքավորն ասավ.— Որ իմ ախչիկը տանես քարից էլ քցես, ես ռազի եմ: Դու գիտես, ոնց որ արժան էս տենում, ընենց արա:

Բերին տվին Հյուսիսի թաքավորի տղին. օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, կերան խմեցին, լավ ուրախություններ արին, եղնա ասին թաքավորին.— Էս մեր ախպերը ըստեղ կմնա, մենք կերթանք, մուրազ ունենք, մեր մուրազին կհասնենք:

Թաքավորն էլ ասավ.— Դուք գիտեք, ոնց որ ուզում եք, ընենց արեք:

Էկան չորս ախպերը թոփ էլան մի տեղ, իրեք ախպերը մի ախպորը մնաս բարով տվին, որ հըմի պետք ա գնան:

Հյուսիսի թաքավորի տղեն ասավ.— Ախպերտինք ջա՛ն, էդ որ գնում եք, ընչո՞վ իմանամ ես, որ ձեր տեղը նեղացել ա: Ես էն հունարն ունեմ, որ դուք ամեքդ ինձ մի մտանիք տվեք, ես թլիսմը կանեմ, որիդ գլուխը որ մի բան գա, նրա մատանիքը կխավարի, ես կգամ ախպորտանցս վեկունեմ ու քոմակ կհասնեմ: Բա դուք ի՞նչ հունար ունեք:

Հարավի թաքավորի տղեն ասավ.— Ես ռամչի եմ, որ աշխարհքի էն ծերին մի բան պահեն՝ կգտնեմ:

Արևմուտքի թաքավորի տղեն էլ ասավ թե.— Իմ հունարն էս ա՛ն որ ծովը մի ասեղ գցեն, կմտնեմ ծովի մեջն ու կհանեմ:

Արևելքի թաքավորի տղեն էլ ասավ.— Իմ հունարն էլ իմ թուրն ա ու իմ ձին ա, որ հարիր հազար մարդ ըլի, որի՛ն սուրը կքաշեմ, որի՛ն ձիու ոտքի տակին կկոտորեմ: Ի՛նչ կըլեր հմի էլել էր, զարկեինք վան՝:

Դրանք իրար մնաս բարով ասին ու ճամփա ընկան: Թե ո՛րն են գնում, էդ էլ աստված գիտի: Շատ գնացին, թե քիչ գնացին, գնացին հասան մի քաղաք: Էլ միտք արին, որ գնան մի աղքատ տեղ դնաղ: Գնացին էլ մի պառավի ռաստ էկան: Բարով տվին պառավին, պառավը բարևներն առավ:

Ասին.— Դեղի՛, մեզ դոնախ չես վեր ունի՞:

Ասավ.— Դոնախն աստունն ա, բալեք ջա՛ն, խի՞ չեմ վեր ունիլ:

Պառավը դրանց տարավ տուն, չուլ գցեց տախտի վրեն:

— Նստեցե՛ք,— ասավ,— բալենի ջան:

Թաքավորի տղեն ջեփիցը հանեց մի բուռը ոսկի, տվուց պառավին, որ գնա իրանց հմա իրիկնահացի թաղարեք տենա: Եփոր իրիկնահացը կերան, պրծան, թաքավորի տղեն ասավ պառավին.— Դեղի ջա՛ն, էս ձեր քաղաքումը ի՞նչ թագա խաբար կա:

Պառավն ասավ.— Ա՛յ բալա ջան, աստու գուլումը հասել ա մեր քաղքին: Ֆլան տեղը մի սար կա, էն սարումը քառասուն դև փեյդա են ըլել, էկել են թաքավորի էրկու ախչկանը փախցրել, տարել: Հըմի աստու իրան օրը մեր թաքավորը դոշուն ա թոփ անում, գնում կովում դների հետ, որ ախչկերանցը ազատի: Համա դները դուս են գալի, թաքավորի դոշունին ջարդում, ջուրը մաղում: Էս քաղքումը էլ ջահել մարդ չմնաց, չիմնուն էլ տարավ կոտորել տվուց. ա՛յ, էդա թագա խաբարը:

Եդնա թաքավորի տղեն ասըմ ա.— Դեղի ջա՛ն, մի արի ինձ հետ դուս գնանք, էն սարի սամթը ինձ շանց տուր:

Պառավը դուս ա գնում, շանց ա տալի, թե ֆլան սարի գլխին շատ մենձ կրակ են անում ու ընդեղ ապրում:

Թաքավորի տղեն ասըմ ա պռավին.— Դեղի ջա՛ն, դուն իմ ախպորտանցը բան չասես, ես գնում եմ դներին ջարդել:

Պառավն ասըմ ա.— Ա՛յ բալա ջան, քեզ պես հազար իգիթ ա գնացել, նրանց ձեռիցը սաղ եղ չեն էկել, ջահել ես, ջիվան ես, արի ինձ լսի, ձեռը վիկալ, գնալ մի:

Համա թաքավորի տղեն չի լսում պառավին, վեր ա կենում, գնում: Գնում հասնում ա դների բնակարանը: Գնում ա, տենում ա, որ մի մերու միջին էրկու դաթ ամարաթ շինած, ամարաթի աղաքին մի մենձ կրակ ա արած, կրակի վրա մի մենձ պղինձ դրած, պղինձն ուներ քառասուն

ունկը, պղնձի մեջը ածած էր սաղ-սաղ պախրենի, կխտարնի, արջ, աղվես, պղնձի դրաղներքին խտոր են դառած քառասուն դներ:

Թաքավորի տղեն ձիուցը դվեր ա գալի, ձին կապում ա մի ծառից, նի ա մտնում, տենում ա կրակի վրա պղինձը, արմանում ա, եղնա ասըմ ա, թե. «Հալա մի դվաթս փորձեմ, տենամ կարա՞մ պղինձը տեղիցը կտրեմ»: Ձեռները գձում ա պղնձի ընկները, բարձրացնում չվել գոտկատեղը: Դների մինը զարթուն ա ըլում, տենում ա էդ բանը, վախիցը սիրտը պատտում ա: Տղեն ասըմ ա.— Հըլա գնամ տենամ թաքավորի ախչկեքը էս ամարաթո՞ւմն են:

Գնում ա տենում, որ էրկու ախչկեքն էլ անթար քնած են: Դրա ոտնաձենիցը ախչկեքը զարթնում են, ասում են.— Իսա՛ն, իսան-օղլի, դուշը իրան թևովը, օձը իրան պորտովը համարձակվում չի էս սամթովը անց կենա, դուն քանի՞ գլխանի ես, որ կարացել էս ըստեղ գաս:

Թաքավորի տղեն ասըմ ա.— Ես էկել եմ ձեզ դների ձեռիցը ազատեմ:

Եղնա դուս ա ըլում թաքավորի տղեն, կաղնում բալկոնումը, ձեն ա տալի դներին.— Դեն՛ր, վեր կացեք, էկեք տղամարդի պես, մի ջան ես եմ, քառասունը՝ դուք:

Դները իմանալուն պես, մինը մնի եղնա վեր են կենում ու դրբա թաքավորի տղեն գնում, որ մենձ թիքեն անկաճը թողուն: Թաքավորի տղեն թուրը հանում ա, նարդիվանների վերի կռանը կաղնում ա, ո՛ր դըն գալիս ա՝ թրով տալիս ա, գլուխը մի կռան վրա ա վեր ընկնում, ջամդաքը՝ մի կռան: Ընենց որ քառասուն դն էլ գալիս են քառասունի գլուխն էլ կտրում ա: Եղ ա դառնում թաքավորի ախչկերանցը ասըմ.— Դե՛հ, թաքավորի ախչկեք, ձեր դներին կոտորեցի, եսիրութենից ձեզ ազատեցի, մնաք բարի, ես գնում եմ:

Թաքավորի ախչկեքը չոքեցին դրա աղաքին ու ասին.— Դու մեզ եսիրութենից ազատեցիր, մենք քեզ թողուլ չենք, որ գնաս:

Համա թաքավորի տղեն լսեց ոչ, ասավ.— Պետք ա անպատճառ գնամ, մնալ չեմ:

Թաքավորի ախչկեքը տեհան, որ մնալու միտք չունի, ամենքը իրանց մատի մատանիքը հանեցին ու դրին դրա մատը, ասին.— Սրանով մենք քեզ կգտնենք:

Եղնա թաքավորի տղեն ձին նստեց, մի համլաթումը հասավ իրա կացարանը:

Ռավոտը լիսացավ, թաքավորը դռունը վիկալավ գնաց, որ կռվի դների հետ: Դեռ հեռու էր, ախչկեքը տեհան իրանց հոր դռունը, բղավեցին, ասին թե.— Լիասիրտ էկեք, վախիլ մեք, որ դներին կոտորել են:

Թաքավորն էկավ տեհավ, որ դներին կոտորած, ախչկերանցը վեկալավ, գնաց իրա ամարաթը: Էն սրհաթը հրաման արավ, որ քաղքիցը դուս ըլող չըլի:

Բերին խալխին թոփ արին թաքավորի ամարաթի աղաքը:

Ախչկերանցը ասավ.— Գնացեք դներին սրպանող մարդին գտեք:

Ախչկեքը գնացին խալխի մեջը ու ասին.— Ամեն մարդ իրա էրկու ձեռը աղաքին բռնի, որ մենք ձեռները տենունք:

Խալխը ձեռները վեր վերուց, ախչկները գնացին, էկան, մտիկ տվին ու ասին.— Սրանց չիմնուն էլ ըդու արա, գնան իրանց բանը, դներին սրպանողը սրանց մինն էլ ա չի:

Եղնա հրաման արավ թաքավորը, թե. «Տեհեք, ո՞ւմ տանն ա մարդ մնացել, բերեք»:

Գնացին պռավի տանը տեհան՝ իրեք տղա. աղաք արին ու բերին թաքավորի ամարաթի աղաքը:

Թաքավորի ախչկեքը տեհան թե չէ, ասին.— Հրեղ դներին սպանող տղեն գալիս ա:

Տղեքն էկան թե չէ, ձեռներուն մտիկ տվին, մատանիքնին

ճնանչեցին:

— Ա՛յ ասին,— ափո՛ւ, էս ա մեզ դների ձեռքիցն ազատողը:

Թաքավորը եղ տղիցը շատ ռազի էլավ, մենձ դոնախլուղ սարքեց, աղքատներին փող բախշեց, շատ մենձ ուրախութեն արին:

Եղնա թաքավորն ասավ.— Ա՛յ տղա, էսօր իմ էրկու ախչիկն էլ, իմ թաքավորութինն էլ տալիս եմ քեզ, արի նստի թախտիս, թագս վեր ունեմ դնեմ գլխիդ:

Թաքավորի տղեն ասավ.— Թաքավորն ապրած կենա, քու ախչկերքը իմ քվերտինքն են, ես քու ախչկերանցը կտամ մինը մի ախպորս, մինն էլ մի ախպորս, սրանք իմ մենձ ախպերտինքն են:

Թաքավորը ռազի կացավ, ասավ.— Ոնց որ ուզում ես, ընենց էլ արա:

Բերին եղ տղերանցը տվին թաքավորի ախչկերանցը, հրսանիքի թաղարեք տեհան: Օխտն օր, օխտն քշեր հրսանիք արին, կերան, խմեցին, քեֆ արին:

Մի քանի օրից եղը թաքավորի տղեն ասավ իրա ախպորտանցը.— Ինձ երազիս միչին բերին Դունյա-գյուգալի պատկերը շանց տվին, պետք է գնամ գտնեմ նրան:

Ասավ ու ճամփու թաղարեք տեհավ: Մի քանի օրից եղը, մնաս բարով ասավ ախպորտանցը, ճամփա ընկավ գնաց Դունյա-գյուգալի հոր ամարաթի դռանը վեր էկավ, դոնախ ընկավ նրանց տանը:

Ասավ Դունյա-գյուգալի հորը.— Ես Արևելքի թաքավորի տղեն եմ, էրազիս միչին տեհել եմ քու ախչկա պատկերը ու էկել եմ, որ առնեմ: Հըմի ո՞նց ես ասում, կամքովդ ես տալի՞, թե՞ պետք ա կռվով տանեմ:

Սան դեմա՞ էս թաքավորի տղի պատկերն էլ էրագումը Դունյա-գյուգալին են շանց տվել ու բուրթա տվել:

Ախչիկը եփոր տենում ա թաքավորի տղին, ասում ա հորը.— Սա ա էրազիս մեչը տեհած բուրթա: Էլ կռիվ հարկավոր չի, կամքովդ ինձ տուր դրան:

Հերը ռազի կացավ, նշան վերցրուց թաքավորի տղիցը, հըրսանիքի թաղարեքը տեհան, օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արին, կերան, խմեցին, քեֆ արին:

Հըրսանիքի վերչումը Դունյա-գյուգալի հերը ծովի դրաղին ուներ մի ամարաթ, էն էլ տվուց Դունյա-գյուգալի հետ թաքավորի տղին, որ գնան ընտեղ ապրին: Թող դրանք ընտեղ ուրախ ապրեն, աստված դրանց բանն հաջողե, մենք խաբարը Արաբից տանք:

Էդ քաղքումը սլար մի Արաբ, եղ Արաբը սիրահարվել էր Դունյա-գյուգալի հետ. իմացավ, որ Դունյա-գյուգալին հըրսանիք են արել, սկսեց մտքի եղնա ընկնիլ, թե ի՞նչ հնար գտնի, որ Դունյա-գյուգալին փախցնի: Գնաց մի ջաղուքար պառավ գտավ, ասավ.— Քեզ ի՞նչքան ոսկի ուզես կտամ, որ Դունյա-գյուգալին խափես, բերես իմ կուշտը:

Վիզը կալավ պառավը, որ. «Դունյա-գյուգալին մախսուս կըբերեմ, համա ինձ հմա մի խնոցի կբերես ու օխտն օրվա պաշար: Ես կերթամ կբերեմ»:

Արաբը գնաց մի խնոցի, օխտն օրվա էլ պաշար բերուց տվուց պըռավին:

Պառավը պաշարը դրուց խնոցու մեչը, խնոցին գձեց ծովի երեսն ու ինքը վեր էլավ խնոցու վրա, քշեց գնաց դըբա Դունյա-գյուգալի ամարաթը: Եփոր հասավ էն կռան դրաղը, խնոցին պահեց մի դամուշկուտի մեջ, ինքը գնաց թաքավորի տղի կուշտը, ասավ.— Բարի օր քի՛, բալա ջա՛ն:

— Աստու բարին քե, դեղի՛:

Պառավը ձեռները խաչում ա, չոքում թաքավորի տղի աղաքին ու դանչանք, միննաթ անում, թե.— Անտե՛ր, անտիրական մի պառավ եմ, տղեքս կոտորվել են, մնացել ա մի կենտ բաղուշ իմ գլուխը, հըմի քու ոտի տակը ֆողն ու մոխիրն եմ, քու վարձքի խաթեր ինձ դարավաշ վեկալ

քու ամարաթումը, շատ հավատարիմ դուլլուդ կանեմ: Մենակ իմ հախը էն ըլի, որ մի փոքր հաց տաք՝ ուտեմ, էլ ուրիշ ոչ մի բան էլա ուզիլ չեմ, օդուլ չունիմ, ուշադ չունիմ:

Թաքավորի տղեն խղճահարվեց պառավի վրա, հրամանք արավ նոքարներին, որ.— Էս պռավին հաց տվեք ուտի, թող արեք ըտեղ մնա:

Եփոր Դունյա-գյոզալն էդ պառավին տենում ա, հարցնում ա թաքավորի տղին. թե.— Էս քավթառը ո՞րդիան ա էկել ըստի:

Թաքավորի տղեն էլ ասըմ ա.— Անտեր, անտիրական քյասիբ պառավ ա, էկել ա մեզանով ա ընկել, օրենը մի կտոր հաց կուտի, ըստեղ կկենա:

Դունյա-գյոզալն ասում ա.— Սրան ըստիան դուս արա, կորչի՛, սրանից մեզ շատ կգա:

Թաքավորի տղեն ծիծաղում ա Դունյա-գյոզալի վրա, թե.— Ճանճն ի՞նչ ա, որ ճենճը ի՞նչ ըլի:

Մի թիքա հաց ա, թող ուտի, վեր ընկնի կենա: Տեղովը կրակ դառնա՝ մի մագս կարալ չի վառի:

Դունյա-գյոզալն ասըմ ա.— Դու գիտես, մեղքը քու շլինքը:

Պառավն սկսում ա հնենց դուլլուդ անիլ. էրկու-իրեք օրվա մեջը հնենց ա իրեն սիրել տալի, որ սաղ ամարաթը մավա են գնում պառավին: Քշեր-ցերեկ նրանց կշտին ա ըլում:

Պառավը տենում ա, որ չկել թաքավորի տղեն իրան թուրը վրիցը իրիկները վե չի անում, նրա աչքը կաշում չի, ռավոտն էլ չկել Դունյա-գյոզալը թուրը տանում չի թաքավորի տղի դռնին դնում, նա զարթնում չի: Օրերի մի օրը պառավը հին շորերը-մորերը թոփ ա անում, Դունյա-գյոզալին ասում ա.— Խանո՛ւմ, արի էսօր գնանք ծովի դրաղը, դուն ընդի սեհր արա, էս էլ էս կեղտոտ շորերը լվանամ:

Խանումն ասըմ ա, որ.— Լավ էս անում, դե արի գնանք:

Պառավն ու խանումը վեր են կենում, գնում ծովի են տեղը, որտեղ պառավը խնոցին պահել էր: Թաքավորի տղեն էլ թուրը վրիցը վեր էր առել, պատիցը կախել ու ինքը քնել:

Ջաղուքար պառավը ըստնք լավ տեհած խանումին ասըմ ա.— Խանում ջա՛ն, մենձուրթյունը ախտել ա, սապոնը մտիցս ընկել ա. դու նստի քեզ սեհր արա, էս գնամ ամարաթիցը սապոնը բերեմ:

Խանումն ասըմ ա.— Դե գնա՛, դեղի՛:

Պառավը վեր ա կենում, գնում ա ամարաթը, թաքավորի տղի թուրը պատիցը վեր բերում, գցում ծովը, ինքը գալիս ա Դունյա-գյոզալի կուշտը, մագերիցը բռնում, տալի գետնովը, ձեռնուտը դայիմ կապում, կոխում խնոցու մեջ, ինքը վեր ըլում խնոցուն, ծովի էրեսն ա գձում, քշում գնում Արաբի ամարաթի տակին դուս գալի: Դունյա-գյոզալին հանում տալիս ա Արաբին: Արաբը իրան քաշովը մին ոսկի ա տալի պառավին, ճամփա դնում:

Հըմի խաբարը ումնի՞ց տանք, խաբարը տանք Հյուսիսի թաքավորի տղիցը:

Հյուսիսի թաքավորի տղեն մի դափիլ մտիկ ա տալի ձեռի մատնիքներին, տենում ա Արևելքի թաքավորի տղի մատանին խավարել ա, ասըմ ա.— Վա յ մադաթ, ախպորս գլուխը էս ի՞նչ օղբաթ ա էկել:

Դա դռնուն ա վեր ունում, հասնում Ռամչի ախպորը ու ասըմ.— Բա ասիլ չես, ախպեր ջա՛ն, մեր Արևելքի թաքավորի մատանիքը խավարել ա, ռամըզ գցիր, տենանք սաղ ա՞, թե սըպանած, քոմակ հասնենք:

Ռամչի ախպերը ռամըզ գցում ա՝ տենում ա, որ շատ նեղ տեղ ա, շունչը առին ա, համա տրըփտրըփում ա, ուզում ա շունչը տա:

Նի են հասնում իրեք ախպորով Դունյա-գյոզալի հոր ամարաթը, գնում են տենում են, թաքավորի տղեն քնած, որքան չարչարվում են, չի զարթնում: Եղնա թրին ման են գալի, որ թուրը դնեն դռնին, թուրը չեն գտնում: Ռամչի ախպերը ռամըզ գցում ա, տենում ա, որ թուրը ծովումն ա: Լըղնորդ ախպերը ծովն ա ընկնում, որ ծովիցը հանի: Ծովի տակն ա մտնում, ման

գալի, ման գալի, գնում ա տենում, մի տեղ մի սարի չափ ձուկը թոփ էլած, թուրը դրանց միջին: Հնարք չի ըլում, որ ձկներին ետ տա, թուրը դուս բերի: Դուս ա գալի ծովի տակիցը ու ասում.— Տղե՛րք, ձկները դուրս չեն գալի, որ թուրը հանեմ, ձիանը կըտորեցեք, ձիու ջամդակը ածեք ծովը, ձկները ջամդակի վրա կըլեն, որ ուտեն, բալքա թուրը կարենամ հանեմ:

Հարիրավոր ձիան կտորում են, ածում ծովը, ձկները եղ են դառնում ջամդակի վրա: Լըղնորդը ծովի տակիցը թուրը հանում ա:

Ձեռին բռնած վագ են տալի թաքավորի տղի մոտ, թուրը դնում են դռին՝ էն սըհաթը զարթնում ա, աչքերը աղաղում ա ու ասում.— Ո՛ւֆ, էս ինչ շատ քնել եմ:

Ախպորտանցը որ տենում ա, մնում ա շվարած: Ախպերտինքն ասըմ են.— Ա՛յ քու տունը չքանդվի, դու էղ ի՞նչ թավուր էս քնել, որ ասում ես թե՛ էս ինչ շատ քնել եմ. ո՛ր ա քու Դունյա-ցյոզալը:

Նոր խելքը գլուխն ա գալի, փիքրն ա անում, թե իրա Դունյա-ցյոզալը որտեղ ա: Ռամչի ախպերը ռամը գցում ա, ռամը շանց ա տալի Դունյա-ցյոզալին մի արաբի տան, Արաբը տանջում ա նրան:

Ախպերտինքն ասըմ են.— Դե՛հ, տղերք, սհաթը մեզ հմար թանգ ա, ընչի՞ ենք ճամփա պահում, գնանք էղ Արաբի տան տեղը դգենք, մեր Դունյա-ցյոզալին ազատենք, բերենք: Ասում են ու ճամփա ընկնում: Ռամչին ռամը գծում ա, դրանք գնում են: Դրանք գնում են, հասնում են Արաբի ամարաթին: Արաբի տան չորսի կուռը դռնունը ծեփ ա անում, մին էլ տենում են Դունյա-ցյոզալը դուս էկավ, իրենց տեհավ, փախավ էկավ դրանց մոտ: Թաքավորի տղեն հանեց թուրը, դըրդում արին էղ քաղքի արաբներին՝ ինչ դդար որ արաբ կար:

Եղնա Դունյա-ցյոզալին ասին, թե.— Քեզ ո՞նց կարացին սրանք ըստեղ բերել:

Դունյա-ցյոզալն ասավ.— Էն ջաղու պառավը, որ ասեի, թե դրան պահիլ մի, կփռշմանես, նա ինձ խափեց, բերուց ծովի դրաղը, մագերիցս բռնեց գետնովը տվուց, կոխեց մի խնոցու մեջ, քշեց բերուց տվուց Արաբին:

Էն սհաթը պառավին գտան, թուրը հանեց թաքավորի տղեն, կիսումը շախկա տվուց պառավին: Դունյա-ցյոզալին վեկալան, միտքն արին, որ իրանք հեր ունեն, իրանց հերն էլ թաքավոր ա, իրանց հոր աշխարն էլ մնում ա անտեր, լավն էն ա՝ ամեն մի ախպեր կնիկը վե կալնի, գնա, իրա հոր քաղաքը, ուրախացնի իրա հորն ու մորը:

Միտքն արին էղ բանն ու սարքվեցին, ճամփա ընկան: Էկան Արևմուտքի ու Հարավի թաքավորի տղերանց կնանոցը վե կալան, ճանապարհ ընկան, առաջ գնացին Հյուսիսի թաքավորի քաղաքը: Նրա տղին իրան հարսնովը տվին իրան հորը, թագադան օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, կերան, խմեցին, քեֆ արին: Նրանք հասան իրանց մուրազին, մնացած իրեք ախպերն էլ թող հասնեն իրանց մուրազին:

Էղ իրանց մենձ ախպորը իրան հոր ամարաթումը թողին, իրեք ախպերը թաղարիք արին, ճամփա ընկան, դըբա Հարավի թաքավորի քաղաքը: Նրան էլ տարան իրան հոր քաղաքը, դրան էլ բերին թագադան օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, կերան, խմեցին, քեֆ արին:

Եղնա թաղարիք արին, որ ճամփա ընկնեն, ըղու էլան ու գնացին դըբա Արևմուտքի թաքավորի քաղաքը: Ըտեղ էլ նորմեկանց օխտն օր, օխտը քշեր հրսանիք արին, կերան, խմեցին, քեֆ արին: Ընդիան մնաց Արևելքի թաքավորի աղեն: Դա էլ իրան Դունյա-ցյոզալը վիկալավ, էկավ իրա հոր քաղքի ամարաթի դռանը վեր էկավ, Դունյա-Գյոզալին տարավ փեշքաշ արավ իրան հորը:

Արևելքի թաքավորը փառք տվեց աստծուն, հրսանիք արավ, կերան, խմեցին, քեֆ արին:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստըծանե իրեք խնձոր վեր էկավ, մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: